

ուայց առջևէն քշեցին։ Աս թուղթը դա-
տաւորներուն առջին առանձին կարգա-
թէ որ օգուտ մը չընէ ու կերպերնին
չփոխեն, ձն ատենը յայտնի գիրենք
պատժելու իրաւունք կ'ունենամ։ Դակ
քու պըստրանացդ համար առաջուց խոս-
տացեր եմ քեզի պաշտպան ըլլալ խոր-
հըրդարանին մէջ, որ դուն կղզիէդ խա-
լըսիս, ես ալ խոստմունքէս. ուստի ըս-
տոյդ եղիր որ խօսքս կը կատարեմ։ Պա-
նուկիոս քարտուղարիս գրեցի որ քեզի
երկու հազար արծաթ դահեկան տայ,
կարօտութիւններդ հոգաս։ Թուղթս ալ
ասկէց կը խրկեմ քեզի, որ տրտում
սրտիդ մխիթարութիւն ըլլայ։ Ամեն
ձախորդութիւն ու չարիք հեռու ըլլան
ինծմէ։ Փաւստինա բարև կ'ընէ Ռու-
փինա կնոյդ, աս անորն է, ատ ասորը,
ես ալ քուկդ։

Նորիմ առ Մերկեռիոս սաւմեիացի
գրած թուղթը։

Միրելի բարեկամիս Մերկեռիոսին,
երբեմն իմ ընկերակցիս։— Լրտեսներէդ
մէկը սպասաւորներուս մէկուն հանդի-
պեր է 'ի կապուա, քուկինդ՝ քու թուղ-
թըդ ինծի բերելու, իմինս՝ իմ բաղձանքս
քեզի տանելու ատենը։ Աղէկ դիտելու
որ ըլլաս, կը տեսնես որ սիրտս այնչափ
հոգեբով ու մտմտութիւն լեցուն է՝ որ
չափ դանդաղանքով լեցուն է քու թուղ-
թըդ. իմ ջերմանս մխիթարութեան հա-
մար գլեր ես, ողջ եղիր։ Անանկ յար-
մար ատեն հասաւ թուղթդ որ՝ ջերմ
երակներէս կտրիլ ու սրտիս ուրախա-
բար խօսքերդ մէկ եղան։ Քանի որ
թուղթդ ձեռքս է, ոչ ջերմս կը դառ-
նայ, ոչ մխիթարանքս կը պակսի։ Բայց
նայէ մարդուս թշուառութիւնը. եր-
կիրներ կը նուաճեմ, ուրիշներուն թա-
գաւորութեանը կը տիրեմ, բայց մէկ
ջերմս չեմ կրնար դադրեցնել։

Շատոնց գիտես որ իրար կը սիրենք.
ան օրը որ վրաս վստահացար, իմ վրա
տահովութիւնս ալ քեզի պարտական ե-
ղաւ. անանկ որ քու չարիքդ իմս եղաւ

իմ բարիքս քուկդ։ Վասն զի ինչպէս
որ Պղատոն կ'ըսէ, հոն է ճշմարիտ բա-
րեկամութիւն՝ ուր երկու այլ և այլ մար-
միններու սիրտը մէկ է. ու այն բարե-
կամութիւնը երեսանց է, ուր երկու
մարմիններու հեռաւորութեանը համե-
մատ՝ սրտերնին ալ իրարմէ հեռու է։
Ուրեմն ես միւս դու ըլլալով՝ դուն հոս
ես, դու ալ միւս ես ըլլալովդ՝ ես քովդ
եմ. անանկ որ իմ հեռաւորութիւնս
քու ներկայութեանդ հետ, ու քու ներ-
կայութիւնդ իմ հեռաւորութեանս հետ
մէկտեղ են. ծերակուտէն ալ շատերը
իմացած են որ երկուքնիս սիրով մէկէն
աւելի չենք։

Թուղթդ բերողէն իմացայ ըրած կո-
րուստդ, ու թղթիդ մէջ ըրած դան-
դաւանքներդ պատճառը ան է եղեր որ
նաւերէդ մէկը ընկղմեր է, ու նաւա-
վարները իրենց կեանքը ապրեցընելու
համար՝ նաւուն մէջ եղած կապարները
ծով թափեր են։ Նաւը բեռներէն թե-
թեցեր է, բայց բեռները քու վրագ ե-
կեր են. այնչափ բեռ ծով չեն թափեր,
որչափ հոգ քու սիրտդ։ Գիտնալով քու
բնաւորութիւնդ՝ պէտք է որ կապար-
ներդ փնտռեմ՝ սիրտդ գտնելու հա-
մար. թէ որ այսօր մեռնէիր ու փորդ
բանային, կարծեմ որ սիրտդ մարմնոյդ
մէջ չէին գտնար, այլ կապարին հետ
ծովուն տակը ընկղմած։ Ո՛վ Մերկե-
ռիոս, քու հիւանդութիւնդ իմինիս պէս
մարմնոյ ջերմ չէ, այլ հոգւոյ. անկողնի
մէջ չէ հիւանդութիւնդ, այլ նաւու
մէջ. ցամաքի վրայ չէ, այլ ծովու։ Բը-
ժիշկներուն սորվեցուցած դեղերը չեմ
իտար քեզի, այլ փիլիսոփաներուն խը-
րատը. քու կեանքդ կապարներուն հետ
ընկղմած է. դուն կապարները չունիս,
բայց կապարները զքեզ ունին։

Ըսին ինծի որ ըրած ֆրասիդ ճարը
չգտնալուդ համար՝ տրտմեր ես. չես
գիտեր որ ճար չեղած բանին ճարը համ
բերութիւնն է։ Ո՛վ Մերկեռիոս, հի-
մայ կ'իմանաս որ երբոր ունեցածդ նեն-
դաւոր ժայռերուն հաւտացիր, փա-
փաքդ ալիքներուն, ու ագահութիւնդ
հովերուն, յանձն առիր զանոնք կոր-

սընցընելը: Չեա գիտեր ինչ սորվեցուց մեզի Սոկրատ փիլիսոփայն, չէ թէ խօսքով՝ այլ գործքով, չէ թէ կապար ծովը ձգելով՝ այլ ոսկի, չէ թէ ուրիշնեւրունը՝ այլ իրենը, չէ թէ դժբախտութեամբ՝ այլ խելքով, չէ թէ մորկի՝ այլ իմաստութեան համար: չեա գիտեր ձգելու ատենը ինչ ըսաւ: Ո՛վ գմարդը քեզի գերի ընող հարստութիւն, եւ ըզքեզ կ'ընկղմեմ որ դռն գիւ լընկըմն: Իսկ դուն, կապարներդ ծովը թափելու ատեննին հոն որ գտնուած ըլլայ, իր, կարծեմ կ'ըսէիր: Ո՛վ սիրելի կապարներս, առանց ձեզի ապրելու ատեղը՝ ես ալ զիս ձեզի հետ ծովը կը ձգեմ: Սոկրատ զինքը ոսկիին չհատաց, դուն ըզքեզ կապարին կը հատաս: Վիճակ ձգեցէք, Սոկրատ Աթէնքէն, դուն Սամիայէն: Ետենք ո՞վ սխալեցաւ՝ ո՞վ չահեցաւ: Սոկրատ որ ոսկին ծովը ձգեց, թէ դուն որ կապարը ծովէն հանել կ'ուզէիր: Հին հռոմայեցիք՝ ստոյգ է որ Սոկրատ չահեցաւ կ'ըսէին: Իսկ հիմա, կուան ազահները քու մտածածդ չահաւոր կը սեպեն: Բայց ինծի երեցածը աս է որ՝ դուն կապարը յարգելով՝ ամենուն արհամարհելի կ'ըլլաս, անիկայ ոսկին անարգելով՝ ամենուն պատուելի եղաւ:

Թողլովդ բերողը ըսաւ որ խիստ տրտմութենէդ զիշերը կը պոռաս կը կանչես եղբ'դանգատելով դից ու բախտին դէմ, անանկ որ դրացիներդ քուներնէն կարթընցընես եղբ: Շատ կըցաւիմ ըրածիդ վրայ, վասն զի խելագարութեան նշան է: Թէ որ դիք առին ունեցածդ՝ տեսնելով որ անով ուռեր հպարտացեր էիր, հիմայ որ խոնարհի'նորէն կու տան: Գէշ կ'ընես որ դրացիներուդ նեղութիւն կու տաս: Թէ որ առաջ հարստութեանդ կը նախանձէին, հիմայ անհամբերութեանդ վրայ կը բարկանան: Պարապ տեղը բախտին դէմ կը բողոքես, վասն զի անիկայ ամենքը կը ճանչան, մէկ հոգւոյ խօսքով չեն ատեր զինքը: Ամենքը իրեն հետ խաղաղութեան դաշինք գնելու կը ջանան, դուն կը զրգուես զինքը: մենք

իր առջին զէնքերնիս կը ձգենք, դու զէնք կ'առնես: ամենքը իրմէն կը յաղթուին, դուն կը յանդգնիս իրեն հետ մենամարտիլ: Չեա գիտեր որ անիկայ պարիսպներ կը փլցընէ, ու փլիկած քաղքըներ կը կանգնէ: անապատ կը չէնցընէ, ու չէն տեղուանքը անմարդի կ'ընէ: Թշնամիները բարեկամ կ'ընէ, ու բարեկամները թշնամի: յաղթողները կը կողոպտէ, ու յաղթուողները կը պահէ: Իսկ դուն անոր դէմ ելլել կ'ուզես: Չեա գիտեր ան տողն որ սպարտացուց թագաւորը իր պալատին դրանը վրայ արձանագրել տուած էր: Առաջապահի թախտին խալարունք: Ըսել է որ աղէկ կը ճանչնար բախտին ինչ ըլլալը, ուստի զինքը անոր աւանդապահ կը սեպէր, ամեն ունեցածը բախտին աւանդը կը համարէր՝ չէ թէ իր ստացուածը: Անոր համար բան մը որ կը կորսընցընէր, աւանդը ետ տալ կը սեպէր: ուստի իրաւունք ունի բախտը քեզ անհաւատարիմ սեպելու, որ դուն իր աւանդապահ ըլլալով՝ իրեն դէմ ապստամբեր ու զքեզ տէր ըրեր ես իր տուած աւանդներուն: Ողջ մնացողը կը ժառանգէ մեռնողին ունեցածը, չէ թէ մեռնողը ողջ մնացողինը: ամենքս կը մեռնինք, ինքը ողջ կը մնայ: Թէ որ կ'ուզես իրմէ վրէժդ առնուլ, բարեկամացիր իր թշնամոյն հետ՝ որ է գերեզմանը: վասն զի ինքը ողջերուն կը տիրէ, բայց մեռնողներուն չկրնար: Ասկէց մեծ ի՞նչ յաղթութիւն կը փրնտուես՝ որ ամենուն յաղթողը քեզմէ կը յաղթուի մեռնելովդ: վասն զի ան միայն որ գերեզմանին մէջը ամրացած է, ազատ է աշխարհքիս զիպուածներէն:

Թողթարքդ ըսաւ որ ամառը Հռոմ կ'ուզես եղբ դալ, ու հիմայ որ ձմեռ է՝ Աղքեսանդրիա երթալ: Ո՛վ Մերկեռիոս, կեանքդ լմննալու վրայ է, դուն ազահութեան սկսեր ես: չեա գիտեր որ ծովուն հանդարտութիւնը՝ մորիկներու նշան է: Թերեւս կ'ըսես որ վտանգ չկայ, պարապ նաւերով պիտոր երթաս, կերպաներ բռնաւորելու բերելու: Բայց ես կը համարիմ որ երթալու ատեն ա-

ւելի բեռնաւորած են նաւերդ ագահու-
թիւք քան թէ դառնալու ատենի բեռնե-
րովդ: Երանի թէ Իտալիոյ ագահու-
թիւնը Աղեքսանդրիայի կերպասներուն
ծանրութեանը չափ ըլլար. անոնք քա-
նի մը նաւ կը լեցընեն, իսկ մեր ագա-
հութիւնը նաւատորմիդներ. մեր ագա-
հութեանը ոչ աշխարհքիս նախատին-
քը և ոչ մահուան երկիւղը կրնան յաղ-
թել: Կեանքդ վտանգի կը դնես՝ հարըս-
տութիւն ստանալու համար, ու մա-
հուանդ ատեն հարստութեան անուն
ձգելու. բայց չես գիտեր որ անանկ ա-
նունը, հարբուս եղովներու՝ որ ամե-
նեկին հոտ չեն զգար՝ անուշահոտ եղ
հոտւորտացնել կը նմանի, բայտասան ան-
զգայից, արուսեակ կուրաց, նուազա-
րան խուլերու: Չես գիտեր որ հարըս-
տութեամբդ՝ դրացիներուդ նախանձը
կը գրգռես, աւազակները կարծրնցը-
նես, կեանքդ կը վտանգես, անուանդ
կը փնասես, զաւկներուդ իրարու հետ
վիճելու՝ ու ժառանգներուդ քեզ անի-
ծելու պատճառ կու տաս:

Չերմս վրայ հասաւ, գրիչս ձեռքէս
կ'իյնայ, չեմ կրնար երկընցընել: Փաւա-
տինա քեզի բարեւ կ'ընէ, խիստ տրտ-
մած է կորստեանդ վրայ: Հրամանագիր
խրկեցի որ քեզի նաւ մը տան, չըլլայ
թէ խելքդ կորսընցընես: Աղեքսանդրիա
երթալու որ ըլլաս, Հոռոզս մի հանդի-
պիր, աւազակներու ձեռք կ'իյնաս: Դիք
քեզի պահապան ըլլան. քեզի ալ՝ մեզի
ալ բարի կեանք տան մերայնոց հետ, ու
օտարաց առջին ալ բարի համբաւ:

Նեապոլսոյ մէջ 1343 նոյեմբերի 26ին
հանդիպած փոքրիկը.

Որատիոս ուզելով մեծ մրրիկ մը
ստորագրել, բանաստեղծական էր ը-
սաւ. ինծի կ'երեւայ որ ասկէ աւելի հա-
մառօտ կերպով չէր կրնար անոր ահա-
ւորութիւնը բացայայտել: Վասն զի ոչ
զայրագին երկինք մը, ոչ մրրկայոյզ

ծով մը կրնան հաւասարիլ և կամ ան-
կարող ընել բանաստեղծից գրիչները:
Այս ըսածիս ճշմարտութիւնը՝ Հոմերոս
սին կաբարեսոյ փոթորկին վրայ ըրած
ստորագրութեամբն ալ կը ստուգուի:
Սակայն ոչ վրձինով կը նկարուի, ոչ
խօսքով կը ստորագրուի երէկուան իմ
տեսածս: Պատահար անմահ, և աշ-
խարհիս վրայ չսուած դէպք: Ո՛ր կը
մնայ Հոմերոսի ստորագրած Յունաս-
տանի մրրիկը, Վիրգիլիոսին Սիկիլիոյ
այլեկոծութիւնը, և Լուկանոսին Եպիւ-
րոսեան փոթորիկը: Եթէ ժամանա-
կըս ներելու ըլլայ, իմ գրիչս մեծ
նիւթ պիտի ըլլայ Նէապոլսոյ այս
զարհուրեցի փոթորիկը, զոր ես ա-
ւելի Նէապոլսական կը համարիմ, թէ-
պէտ և ընդհանուր բոլոր Տիւրինեան և
Ադրիական ծովուն վրայ հանդիպած
կը սեպուի: Սակայն եթէ ժամանակին
սղութեմբ պատճառաւ չկարենամ ստո-
րագրել զայն ըստ բաւականին, կրնաք
դուք ապահով ըլլալ որ ասկէ աւելի
սոսկալի պատահար բնաւ չէ լսուած:
— Այս աստուածային պատուհասը օ-
րերով առաջ մերձակայ կղզեկի մը ե-
պիսկոպոսը աստեղագիտութեամբ գու-
շակած էր. բայց ինչպէս շատ անգամ
կը պատահի որ աստեղագէտը ոչ եր-
բէք ճշմարտութեան մը ամենայն մա-
սամբ խելամուռ կրնան ըլլալ, այս ե-
պիսկոպոսն ալ մեծ երկրաշարժ մը մի-
այն գուշակեց որ պիտի ըլլայ նոյեմբեր
ամսուն քսան և հինգերորդ օրը, որուն
ցնցմամբը բոլոր Նէապոլիս համայնա-
ջինջ պիտի ըլլայ: Այս իր գուշակու-
թեանը շատերը հաւատացին, որով և
ժողովրդեան մեծ մասը ուրիշ մտած-
մունք մէկդի թողած, աստուածային
արդարութենէն իրենց մեղացը թողու-
թիւն կը խնդրէին, իբր թէ ստուգիւ
մահուան դուռը հասած ըլլային: Շա-
տերն ալ բանի տեղ չդնելով՝ կը ծիծա-
ղէին այս նախագուշակութեան վրայ,
ըսելով թէ աստեղագիտաց վրայ պէտք
չէ մեծ հաւատք ունենալ, մանաւանդ
երբ քանի մ'օր առաջ այլ և այլ եր-
կրաշարժներ պատահած ըլլան: Իսկ